ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ԲԵՐՎԵՑԻՆ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 4-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչների՝ սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակը:

Տոնի առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, դեկտեմբերի 3-ին, մինչ երեկոյան ժամերգությունը, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար բերվեցին Մայր Աթոռի Գանձատունը պահվող Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների մասունքները: Ժամերգության ընթացքում հոգեւորականաց դասն ու հավատացյալ ժողովուրդն իրենց աղոթքն ու խոնարհումը բերեցին առաքյալների մյուռոնաբույր մասունքներին:

Մայր Տաճարում, Սուրբ Պատարագով տոնախմբվեց սուրբ առաքյալների հիշատակը: Պատարագիչ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանն իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին եւ լուսավորիչ առաքյալների բերած օրհնությանը հայ ժողովրդի կյանքում: Տեր Հայրը մասնավորապես նշեց. «Այսօրվա տոնը, հիրավի, մեր ազգային եկեղեցական տոնացույցի մեծագույն տոներից է: Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ ու նահատակությամբ հայ իրականության մեջ հաստատվեց Քրիստոսի Սուրբ Եկեղեցին, ապրվածային շնորհներով առլեցուն հոգեւոր մթնոլորտը ներգործեց հայի կյանքում, եւ հայորդիք հավատացին ու դավանեցին Հիսուս Քրիստոսին: Եկեղեցագործվեց հայ մարդը, որով հայ ժողովուրդն այլեւս իր գալիք բոլոր սերունդներով դարձավ երկնքի արքայության ժառանգորդ: Արդեն շուրջ երկու հազար տարի է, որ հայ ազգը՝ որպես Հայ Առաքելական եկեղեցի, վայելում է Ս. Հոգու շնորհները եւ ապրվածային օրհնությամբ պարուրված՝ առաջ է ընթանում: ...Այս տոնն իր խորհրդով գալիս է մեր մեջ նորոգելու մեր վստահությունն ու հավատարմությունը հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Հայցենք, որ առաքյալների բարեխոսությամբ քրիստոսավանդ խաղաղություն հաստատվի ամենքի հոգիներում, մանավանդ սեր եւ միաբանություն մեր ազգային կյանքում, համերաշխ գործակցություն համայն աշխարհում»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ Է «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի հետ համատեղ մեկնարկեց «Աջակցություն ընտանիքներին» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրապետական թեմերի առաջնորդների օրհնությամբ, ըստ կազմված ժամանակացույցի՝ քահանաների այցելություններ իրենց հովվության ներքո գտնվող դպրոցներ, որտեղ մանկավարժների եւ ծնողների

հետ հանդիպումների ընթացքում հոգեւոր հայրերը կիսեն ընտանիքի, իբրեւ հասարակության հենք, արդի հիմնախնդիրների, քրիստոնեական ընտանիքի առողջացման անհրաժեշտության մասին՝ անդրադառնալով Հայ Եկեղեցու արժեհամակարգի եւ ընտանեկան ավանդույթների պահպանման հարցերին: Դպրոցներին եւ ծնողներին կտրամադրվի նաեւ թեմատիկ հոգեւոր գրականություն:

Ծրագրի մեկնարկից առաջ դեկտեմբերի 6-8-ը Ծաղկաձորի Կեչառիս համալիրում ծիսական քահանաների մասնակցությամբ տեղի է ունեցել բովանդակային եւ մեթոդական բնույթի դասընթաց, որին բանախոսությամբ հանդես են եկել Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներ, Ազգային ժողովի պատգամավորներ, Կրթության գերատեսչության եւ ՄԱԿ-ի գրասենյակի ներկայացուցիչներ:

Ծրագրի հաջորդ փուլը կյանքի կկոչվի 2010-2011 ուստարվա երկրորդ կիսամյակին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՐԱԺԵՇՏԻ ՅԵՐԵԿՈՒՅԹ ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 10-ին, Գեորգյան հոգեւոր ճեմարանում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի հրաժեշտի ցերեկույթը: Նա վերադառնում է Կոստանդնուպոլիս՝ իր հոգեւոր ծառայությունը շարունակելու Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունում:

Հայաստանի Հանրապետության եւ ճեմարանի օրհներգերի կատարումից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Ճեմարանում պաշտոնավարելու տարիները Սահակ սրբազանը համարեց իր կյանքի ամենաարդյունավետ ժամանակաշրջանը: «Հինգ տարի առաջ ինձ համար հայրենիքը, էջմիածինը մեծ գաղափարներ էին լոկ, այժմ միս եւ ոսկոր առան իմ էության մեջ: ...Պոլիս վերադառնում եմ իմ բոլոր բջիջները հայացած, էջմիածնացած: Շատ բաներ փոխեցին այս տարիներն իմ մեջ. կայունացա, հաստատվեցի եւ հասունացա», - նշեց սրբազանն իր խոսքում: Ապա նա շնորհակալություն հայտնեց ճեմարանի պաշտոնեությանն ու դասախոսական կազմին ըստ ամենայնի աջակցության եւ համագործակցության համար: Խոսքն ուղղելով ճեմարանականներին՝ սրբազանն ասաց. «Այս ճեմարանի ամենակարեւոր տարրը տեսուչը չէ, այլ դուք եք: Մենք բոլորս ձեր ծառաներն ենք, ամբողջ Մայր Աթոռը, իր բոլոր կառույցներով միասին: Ծառայում ենք սիրով, ինչպես ծնողները ծառայում են իրենց երեխաներին: Ձեզ ծառայելը մեծ հաճույք եւ պատիվ էր ինձ համար: Շատ բան սովորեցի ձեզանից, մեծապես դպավորվեցի: Դուք մխիթարեցիք ափյուռքահայ եկեղեցականիս... Ձեզանով հոգիս լցվեց նոր հույսով հայության եւ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ»:

Իր խոսքում Սահակ սրբազանը ողջունեց նաեւ նորանշանակ տեսուչ Տ. Գեորգ վարդապետ Սարոյանին՝ մաղթելով շարունակել ճեմարանի ավանդույթները եւ հաջողությամբ նոր հանգրվանների հասցնել կրթական ասպարեզում Ամենայն Հայոց Հայրապետի տեսիլքը: Սրբազանն իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը հայրական վերաբերմունքի եւ գուրգուրանքի համար՝ հայցելով Հայրապետի օրհնությունը հետագա ծառայության համար:

Իր հերթին Գեորգյան Հոգեւոր ճեմարանի նորանշանակ տեսուչ Հայր Գեորգն անդրադարձավ Սահակ սրբազանի՝ անցնող հինգ տարիների ծառայությանը՝ վստահեցնելով, որ պիտի շարունակի ճեմարանական բոլոր բարի ավանդույթները: Հայր Սուրբը նաեւ երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին տեսչի պատասխանատու պաշտոնն իրեն վստահելու համար:

Ճեմարանի երգչախմբի կատարումներից հետո Սահակ սրբազանին իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իբրեւ բնաբան ընտրելով հայրերի խոսքը, թե՝ «Երանի այն մարդուն, որ հիշատակ ունի Սուրբ Էջմիածնում»: Անդրադառնալով Սահակ սրբազանի Մայր

Աթոռում անցկացրած տարիներին, նրա կրթական, դաստիարակչական, ինչպես նաեւ քարոզչական գործունեությանը՝ Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց. «Արդյունավոր էր իր գործունեությունը Մայր Աթոռում: Այն աշխատանքը, արդյունքները, որ արձանագրեց սրբազանը իր օրինակելի նկարագրով, վարքով: Իր հավատքի խորը ապրումը, հավատավոր անձի կերպարը կարող եք վկայել բոլորդ: ... Հոգեւոր ճեմարանում Հայր Սահակին պաշտոնի կոչելով՝ մենք ցանկացանք, որ Հայր Սուրբը իր խոսքով, կյանքով, իր հավատքի ապրումով շաղախի մեր ճեմարանականների հոգիները, որպեսզի այս երիտասարդները, որ գալիս են աշխարհից, ունենան հավատքի նույն խորն ապրումը, որով հագեցած էր Սահակ աբեղան:

...Մենք այսօր հրաժեշտ ենք տալիս սրբազանին՝ բարի երթ ասելով եւ մաղթելով, որ արդյունավոր լինի իր հեղինակ գործունեությունը այնպես, ինչպես եղավ Մայր Աթոռում»: Վեհափառ Հայրապետը մաղթեց Սրբազանին Սուրբ Հոգու առաջնորդությամբ շարունակել խոսքն ու գրիչը ծառայեցնել մեր ժողովրդին եւ Սուրբ Եկեղեցուն: Նորին Սրբությունը նաեւ շնորհավորեց նոր տեսչին՝ վստահություն հայտնելով, որ Հայր Գեւորգը նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ կշարունակի ծառայությունը նոր պաշտոնում՝ եկեղեցականների արժանավոր սերունդ հասցնելով մեր Եկեղեցուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՈՎ ՀԻՄՆՎԵՑԻՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԹԵՄԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Հայրապետական սրբատառ կոնդակով դեկտեմբերի 10-ին Հայաստանում հիմնվել են երկու նոր թեմեր՝ Վայոց թեմը եւ Տավուշի թեմը:

Հայրապետական կոնդակում մասնավորապես ասվում է.

«Գոհություն եւ փառք ենք մատուցում Բարձրյալ Տիրոջը, որ Իր ամենախնամ օրհնության ներքո զորացնում եւ պայծառացնում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ տերունապատվեր սպասավորությամբ հովվելու մեր ժողովրդին եւ առաջնորդելու Ճշմարիտ Ճանապարհով: Մեր Եկեղեցու դարավոր առաքելությունն արդյունավորվել է հոգեւորականաց նախանձախնդիր ծառայությամբ, բարեպաշտ ժողովրդի հավատավոր ընթացքով, նոր թեմերի եւ համայնքների հիմնումով, եկեղեցական-վարչական կառույցների ազգաշահ գործունեությամբ:

Այսօր, երբ Հայրենի մեր երկրում վեր են հառնում խոնարհված աղոթավայրերը, կառուցվում են նոր եկեղեցիներ, ստեղծվել են նոր համայնքներ ու ծուխեր, հրամայական է դառնում նաեւ եկեղեցավարչական նոր կառույցների հաստատումը: Մեր Սուրբ Եկեղեցու տերունապատվեր առաքելության արգասավորման, եկեղեցավարչական գործունեության առավել լավ կազմակերպման, հոգեւոր սպասավորների ծառայության կանոնակարգման եւ գարաքքային վերատեսչությունը արդյունավոր իրականացնելու համար Հայրապետական այսու Կոնդակով Վայոց ձորի մարզի եկեղեցական համայնքներն առանձնացնում ենք Սյունյաց թեմի կազմից, Տավուշի մարզի եկեղեցական համայնքները՝ Գուգարաց թեմի կազմից եւ հռչակում ենք ստեղծումը Վայոց թեմի՝ առաջնորդանիստ Եղեգնաձոր քաղաքով, եւ Տավուշի թեմի՝ առաջնորդանիստ Իջեւան քաղաքով»:

Վայոց թեմի առաջնորդի պաշտոնում ծառայության է կոչվել Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը՝ ազատվելով Սյունյաց թեմի առաջնորդի պաշտոնից: Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Տ.

Ջավեն աբեղա Յազիչյանը, ազատվելով իր պաշտոնից, նշանակվել է նույն թեմի առաջնորդական տեղապահ: Իսկ Գուգարաց թեմի Տավուշի փոխառաջնորդ Տ. Թորգոմ վարդապետ Տոնիկյանը ծառայության է կոչվել Տավուշի թեմում՝ որպես առաջնորդական տեղապահ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՒԱՆԻ ՎԱՋԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի հիմնադրման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստ: Նիստին ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրաստիճան հոգեւորականներ, ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Երեւանի Պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը, Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ Տ. Ծնորհք աբեղա Սարգսյանի բացման խոսքից հետո շնորհավորանքի խոսք ասաց ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Անդրադառնալով հոգեւոր կրթության կարեւորությանը՝ նախարարը նշեց. «Հոգեւոր կրթությունն իրականում միշտ արդիական, ապագային միտված եւ իր պահանջարկն ունեցող կրթություն է, հատկապես 21-րդ դարում, որն արդեն բազմաթիվ վերլուծաբանների կողմից հոռետեսորեն բնորոշվում է որպես մի դար, երբ մարդիկ կփորձեն ավելի հեռանալ Աստծուց»:

Ա. Աշոտյանը Նորին Սրբությանը հանձնեց ՀՀ ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալը՝ ազգային եւ հոգեւոր արժեքների պահպանման եւ զարգացման գործում ունեցած բացառիկ առաքելության, երիտասարդ սերնդի հոգեւոր դաստիարակության, կրթության եւ գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար: Ապա ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության շնորհակալագրեր հանձնվեցին Գեւորգյան ճեմարանի եւ Վազգենյան դպրանոցի վաստակաշատ մի խումբ դասախոսների:

Հանդիսության ընթացքում շնորհավորանքի խոսք ասաց նաեւ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը: Դպրանոցի շրջանավարտների անունից հանդես եկավ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Լսեցին նաեւ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանի, Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրատան տնօրեն Գեւորգ Տեր-Վարդանյանի բանախոսությունները Սեւանի դպրանոցի պատմության վերաբերյալ:

Գիտաժողովի ավարտին ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Աստծո զորակցությամբ էր, որ իրականություն դարձավ հոգեւոր կրթական այս օջախը հաստատելու մեր երազը: Այսօր անհուն երախտագիտություն ենք ապրում, որ կայացավ եւ ազգային եկեղեցական մեր անդաստանում իր հունձքը տվեց Սեւանի Վազգենյան դպրանոցը, որը դարձավ դարեր ի վեր Սեւանավանքում գործած եւ հոգեմտավոր բեղուն ու նշանակալի առաքելությամբ հայտնի վարդապետարանի ժառանգության եւ ավանդների շարունակողը: ...20 տարիների ընթացքում դպրանոցը կրթել է եկեղեցականներ, ձեւավորել նրանց իբրեւ հավատավոր հայորդյաց հոգեւոր մատռվակներ: Ի խորոց սրտի մեր աղոթքն է, որ ամենակալ Տերը հաջողության առաջնորդի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կրթական հաստատությունները, իր ամենախնամ Աջի հովանու ներքո պահպանի տեսչական ու դասախոսական կազմը եւ սիրելի սաներին, իր երկնառաք օրհնությունն անպակաս դարձնի ու-

սումնակրթական մեր հաստատություններից ներս: Թող Տիրոջ սերը, շնորհը եւ խաղաղությունը միշտ մեզ հետ լինեն այսօր եւ հավիտյանս, ամեն»:

Եզրափակելով խոսքը՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել դպրանոցի կայացման եւ գործում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Դեկտեմբերի 17-18-ին Վիեննայում գումարվեց Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի եւ Եւրոպայում միգրանտների գծով եկեղեցիների հանձնախմբի կողմից կազմակերպված «Եւրոպական եկեղեցիների պատասխանը միգրացիային 2010. ձեռքբերումներ, մարտահրավերներ եւ ապագայի հեռանկարներ» վերնագրով խորհրդաժողով, որին մասնակցում էին ներկայացուցիչներ Եւրոպայի ավելի քան 20 երկրներից: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ժողովին ներկայացնում էր Տ. Պարույր քահանա Ավետիսյանը:

Համաժողովին ներկայացվեցին զեկուցումներ եւ ծավալվեցին քննարկումներ Եւրոպայում ապաստանած գաղթականների խնդիրների, իրավունքների պաշտպանության, հասարակության մեջ ինտեգրման, ազգայնամոլության եւ խտրականության դադարեցման վերաբերյալ: Ժողովում ընդունվեց բանաձեւ, որով կոչ ուղղվեց Եւրոպային՝ պաշտպանելու գաղթականների մարդու իրավունքները եւ դատապարտելու նրանց նկատմամբ ազգայնամոլության հողի վրա դրսեւորվող խտրականությունը եւ բռնությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՒԱՆՑԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 300-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Դեկտեմբերի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ հոբելյանական նստաշրջան՝ նվիրված երանաշնորհ Ն.Ս.Օ.Տ.Տ. Սիմեոն Ա Երեւանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 300-րդ տարեդարձին: Նստաշրջանը անց է կացվում հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի միջոցառումների շրջանակում: Գիտաժողովին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանականներ, մշակույթի եւ գիտության մշակներ:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը, որից հետո ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «...Երանաշնորհ Սիմեոն Ա Երեւանցի Կաթողիկոսը կրթվեց ու դաստիարակվեց Սուրբ Էջմիածնում, որը նրա համար դարձավ հոգեմտավոր ծննդավայր, եւ որի զորացմանն ու պայծառությանը նա ամբողջանվեր ընծայաբերեց իր կյանքը: ...Սուրբ Էջմիածնի հանդեպ անհուն սիրով Սիմեոն Երեւանցին գործեց Մայր Աթոռում՝ որպես միաբան եւ ուսուցիչ, արդյունավորեց իր առաքելությունը

հայոց վիճակներում՝ որպես նվիրակ: Այդ նույն սիրով իր ժողովրդին նվիրված պայծառամիտ ու քաջ հովիվը բազմեց Լուսավորչի Գահին: Ժամանակի դժվարին ու աննպաստ պայմաններում իր հավատավոր հոտի պառապանքների ականատեսը լինելով, իր սրտում մեծ վիշտ կրելով՝ Սիմեոն Հայրապետը իրեն կոչեց «վշտակոծ եւ ցավակիր Կաթողիկոս»: Սակայն հավատավոր ժողովրդին ի մխիթարություն բազմաբեղուն արգասավորեց տերունապատվեր ծառայագործությունը...», - իր խոսքում նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Անդրադառնալով Սիմեոն Կաթողիկոսի՝ ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպմանն ու զարգացմանն ուղղված ջանքերին՝ Նորին Սրբությունը նշեց, թե Սիմեոն Հայրապետը վստահ էր, որ սեփական անկախ պետությունից զրկված, աշխարհով մեկ սփռված իր սիրելի ազգի միասնությունն ու հոգեւոր ինքնությունը հնարավոր է պահպանել միայն Սուրբ Էջմիածնով եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ համախմբվելով:

Գարեգին Բ Կաթողիկոսը Սիմեոն Երեւանցու կոթողային գործերից նկատեց 1771 թ. Սուրբ Էջմիածնում՝ հայրենի հողի վրա, առաջին հայապառ դպրարանի հիմնադրումը, որի գործունեությունն ուղղված էր մեր ժողովրդի հավատքի զորացմանը, ինքնության պահպանմանը եւ ազգային-եկեղեցական կյանքի վերազարթոնքին:

Նորին Սրբությունը ողջունեց նաեւ Մայր Աթոռի արխիվի եւ Մաշտոցի անվան Մատենադարանի նախաձեռնությունը՝ հրատարակության պատրաստելու Սիմեոն Երեւանցու անտիպ գործերը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց օրվա բանախոսներին եւ Մայր Աթոռի Արխիվի տնօրենին ու աշխատակիցներին՝ երանաշնորհ Հայրապետի ծննդյան 300-րդ տարեդարձին նվիրված նստաշրջանը կազմակերպելու համար:

Այնուհետեւ ՀՀ Մշակույթի նախարարության անունից ողջույնի խոսք ասաց ՀՀ Մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը:

Նստաշրջանի առաջին նիստը, որի նախագահողներն էին Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը եւ Գեւորգ Տեր-Վարդանյանը, բացվեց Պավել Չոբանյանի՝ «Սիմեոն Ա Երեւանցու գործունեությունը» խորագրով բանախոսությամբ: Այնուհետեւ բանախոսությամբ հանդես եկան Վազգեն Համբարձումյանը («Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի «Ջամբռ» երկի եւ «Քարոզգրքի» լեզվական առանձնահատկություններ»), Հայկ սարկավագ Թադեւոսյանը («Մայր Աթոռի Ս. Գրիգոր Լուսավորիչ դպրարանի հիմնադրումը»), Գայանե Պողոսյանը («Թղթի պատրաստման արվեստը Հայաստանում եւ Սուրբ Էջմիածնի դպրարանի առաջին հրատարակությունների թուղթը»), Քնարիկ Ավետիսյանը («Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի պատկերագրությունը Սիմեոն Կաթողիկոսի օրոք»), Ավետ Ավետիսյանը («Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի պատվիրած Աստվածամոր վերափոխման սրբապատկերի խորհրդաբանությունը») եւ Արմեն Տեր-Ստեփանյանը (« Սիմեոն Երեւանցին եւ Աղվանից կաթողիկոսությունը (ըստ Վարդան արքեպիսկոպոս Օձնեցու)»):

Երկրորդ նիստը նախագահում էին Արմեն Տեր-Ստեփանյանը եւ Գրիգոր Բրուտյանը, որի ընթացքում բանախոսություններ ներկայացրեցին Գեւորգ Տեր-Վարդանյանը («Սիմեոն Երեւանցու եղբորորդու (Գեւորգ Խուբյանց) պատմագրական ժառանգության արժեքը»), Գրիգոր Բրուտյանը («Սիմեոն Երեւանցու «Տօնացոյցը»), Վարդան Դեւրիկյանը («Սիմեոն Կաթողիկոսի «Տաղարանը»), Արփենիկ Ղազարոսյանը («Սիմեոն Ա Երեւանցու ձեռագրային ժառանգությունը»), Դավիթ Ղազարյանը («Սիմեոն Երեւանցու մատենագրական ժառանգությունը»), Միքայել Մալխասյանը («Սիմեոն Երեւանցու «Ջամբռ» երկը՝ որպես պատմա-աշխարհագրական հետազոտությունների սկզբնաղբյուր»), Մհեր Նավոյանը («Սիմեոն Երեւանցին եւ ԺԸ-ԺԹդդ. հայ երաժշտական մշակույթի խնդիրները») եւ Էմին սարկավագ Խաչատրյանը («Սիմեոն Ա Երեւանցին՝ որպես շինարար Հայրապետ»):

Բանախոսությունների ավարտին տեղի ունեցավ քննարկում, որից հետո փակվեց մեծանուն Հայրապետի ծննդյան 300-ամյակին նվիրված նստաշրջանը:

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ շուքով նշվեց Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի տոնը: Ամեն տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Ստեփանոսի տոնին մեծ հանդիսավորությամբ կատարվում է սարկավագական ձեռնադրություն: Օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ս. Պատարագի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը կատարեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 30 սաների սարկավագական ձեռնադրության արարողությունը:

Ընթացս Ս. Պատարագի՝ ձեռնադրող Սրբազան Հայրը հավուր պատշաճի ներկայացրեց Ս. Ստեփանոս նախասարկավագի տոնի խրհուրդն ու պատգամը՝ ուղղված մեր հավատավոր ժողովրդին: Այնուհետեւ սրբազան հայրը, մասնավոր կերպով իր խոսքն ուղղելով նորընծա սարկավագներին, նշեց. «Սիրելի նորընծաներ, մեր օրերում ձեզանից ոչ ոք ակնկալություն չունի եւ չի ունենալու, որ ձեր հավատքն ու կյանքն արյան նահատակությամբ պսակեք: Այսօր՝ մեր ժամանակներում, պակաս է զգացվում մյուս նվիրական հեղուկի՝ ճակատի քրտինքի: Ձեր անհոգնաբեկ ծառայությամբ քրտինք թափեցեք եւ այն խառնեցեք պատմության ներկային ու ապագային: Վստահ ենք, որ պիտի դառնաք բաբախող սիրտն այն Եկեղեցու, որի երակներում պիտի հոսի ձեր ծառայության եւ առաքինի կյանքի ազնիվ հեղուկը: Պիտի դառնաք այն հեղուկը, որը հոսելու է այն մեծ սրտի մեջ, ուր մեր Տերն է բնակվում եւ ձեր օրինակելի ընթացքով ու արդյունավետ գործերով պիտի ապրեք Հիսուսի հետ, Հիսուսի համար եւ Հիսուսի մեջ»:

Արտակ սրբազանը խոսքի վերջում մաղթեց, որ ամենակալ Տերը նոր ստեփանոսներ ծնի մեր Եկեղեցու անդաստանում եւ թող որ ամենազոր Փրկիչը նոր վկաներ, նվիրյալ քրտինքով կյանքը մարտիրոսությամբ կնքած զավակներ հասցնի, որպեսզի նրանց միջոցով փառավորվի ամենակալ Ապրված այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամեն»:

Պատարագի ավարտից հետո տոնի առիթով Մայր Աթոռի բոլոր սարկավագներին Հայրապետական իր օրհնությունն ու հայրական պատգամը բաշխեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, խոսքն ուղղելով նոր ձեռնադրվածներին, իր մասնահատուկ շնորհավորանքը բերեց եւ ողջություն մաղթեց նրանց՝ խրատելով օրինակել Ս. Ստեփանոսի կյանքի հոգեւոր սխրանքը, նրա հավատքն ու սերը, որոնց վրա պետք է խարսխված լինի հոգեւորականի առաքելությունը:

Նախորդ օրը, ձեռամբ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի, դպրության չորս աստիճաններ ստացան 14, իսկ ուրարակիր դարձան՝ 19 ճեմարանականներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ՝ ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Դեկտեմբերի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց օրհնության կարգ հին

Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Վեհարանի նորոգության եւ վերակառուցման առիթով: Վերջին անգամ հին Վեհարանը նորոգվել է լուսահոգի Վազգեն Ա Հայրապետի շրջանում՝ 1958 թվականին:

Հիմնանորոգության եւ վերակառուցման աշխատանքներն իրականացվում են բարերարությամբ Մայր Աթոռի արժանավոր զավակների՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ փիար Պերճ Սեդրակյանի եւ նրա փիկնոջ՝ Վերա Սեդրակյանի: Շինարարությունն իրականացնում է «Հորիզոն 95» ՍՊԸ՝ գլխավորությամբ Գագիկ Գալստյանի:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Վեհարանի նորոգության եւ վերակառուցման աշխատանքներին: Նորոգության ընթացքում հայտնաբերվել են տարբեր ժամանակաշրջաններում իրականացված շինությունների շերտեր, վաղ շրջանի կառույցներ, որոնք պեղումների արդյունքում գիտնականների կողմից թվագրվել են Է-Թ, ԺԲ-ԺԳ դարերով: Այս առնչությամբ Նորին Սրբությունը հայտնեց, որ դրանք անհապաղ կպահպանվեն, իսկ հին Վեհարանի շենքը կպահպանի իր պատմաճարտարապետական հորինվածքը: Նորոգությունից հետո հին Վեհարանը կշարունակի գործել իբրեւ թանգարան: Ծանուցվեց նաեւ, որ Վեհարանի պատմական կառույցի հարավ-արեւմտյան մասում կառուցվում է կացարանային մասնաբաժին:

Միասնական Տերունական աղոթքից հետո Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանն ընթերցեց այս առիթով կազմված հիշատակարանը, որում մասնավորաբար ասվում է. «...Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում եկեղեցանվեր ու ազգասեր հայորդյաց, որ սատար են լինում վերաշինությանը եւ բարեկարգմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Հայոց Սրբազան հոգեւոր կենտրոնի:Թող Ամենակալ Տերն օրհնի բարերարներին եւ երկնաշնորհ հաջողություններ պարգեւի նրանց բոլոր եկեղեցաշեն ու ազգանվեր բարի գործերին. ամեն»: Ապա Նորին Սրբությունն արձանագրությունը զետեղեց շենքի հիմքերում՝ մաղթելով, որ Աստված շեն ու պայծառ պահի Սուրբ Էջմիածինը եւ եռանդաշատ՝ Մայր Աթոռի միաբանությունը, որպեսզի այն պատվով եւ արդյունավորությամբ շարունակի իր սրբազան առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

Արարողությանը մասնակցում էին Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը, Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Մայր Աթոռի միաբաններ եւ պաշտոնյաներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի են ունեցել հոգեւոր սպասավորների նոր նշանակումներ:

Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը, ավարտելով հովվական ծառայությունը Գերմանիայի Հայոց թեմում, նշանակվել է Սուրբ Գեղարդավանքի վանահայր: ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի հոգեւոր սպասավոր Տ. Տիրան քահանա Ավագյանը ծառայության է կոչվել ՀՀ Զինված ուժերի Հոգեւոր առաջնորդությունում: Արագածոտնի թեմում ժամանակավոր ծառայության կոչված Տ. Գնել քահանա Գաբրիելյանն իր հոգեւոր սպասավորությունը կշարունակի Գերմանիայի Հայոց թեմում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովնան վարդապետ Հակոբյանը նշանակվել է Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակատար:

Հրապարակչական բաժնի գրասենյակի վարիչ Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը համապատասխանությամբ նշանակվել է Քրեակատարողական հիմնարկների հոգևոր սպասավոր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Հունաստանի Հայոց թեմի հոգևոր հովիվ Տ. Խորեն աբեղա Առաքելյանը դեկտեմբերի 15-ից նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հունաստանի թեմի առաջնորդական տեղապահ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ մի քանի նորաօծ եկեղեցականներ, ավարտելով քառասնօրյա պատրաստության շրջանը, ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերում եւ հաստատություններում:

Տ. Անդրեաս աբեղա Եզեկյանը նշանակվել է Գեորգյան հոգևոր ճեմարանի ուսումնական գծով փոխտեսուչ: Տ. Պարթեւ քահանա Մուրադյանը հոգևոր սպասավորության է կոչվել Արարատյան Հայրապետական թեմում, Տ. Մասիս քահանա Վարդերեսյանը՝ Գուգարաց թեմում, Տ. Զոհրապ քահանա Մանասյանը՝Կոտայքի թեմում, Տ. Արշեն քահանա Սարգսյանը՝ Շիրակի թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 24-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, կատարվեց Մայր Աթոռի վարչական նոր մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը:

Նոր կառույցը նախագծվել է Մայր Աթոռի ճարտարապետա-շինարարական բաժնի կողմից: Մասնաշենքը, որտեղ տեղակայվելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը, ԵՀԽ Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամը եւ ԷԿԼՕՖ հիմնադրամը, կառուցվում է Մայր Աթոռի, Կլոր սեղանի եւ ԷԿԼՕՖ-ի միջոցներով:

Հանդիսավոր արարողության ընթացքում, շարականների եւ սաղմոսների երգեցողության ներքո, ԷԿԼՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը օրհնեցին կառուցվող շենքի հիմքերը:

Արարողության ընթացքում ներկաներին դիմեց Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը, վստահություն հայտնելով, որ նոր պայմանները լավագույնս պիտի նպաստեն միջեկեղեցական երեք կառույցների գործունեության առավել արդյունավետ իրականացմանը:

Ապա Հովակիմ սրբազանն ընթերցեց նոր կառույցի հիմնարկեքի առիթով հրապարակված Հայրապետական օրհնության գիրը, որում մասնավորաբար ասվում է. «Հայրապետական մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ԵՀԽ Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամին եւ ԷԿԼՕՖ հիմնադրամին, որոնք ընդառաջ մեր հրավերին ՝ քրիստոնեական սիրով զորավիգ եղան կառուցելու այս շինությունը, որի բարեկարգ հարկի ներքո պիտի կազմակերպվի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեկեղեցական կարեւոր առաքելությունը»:

Վերջում Կլոր սեղան եւ ԷԿԼՕՖ հիմնադրամների գործադիր տնօրեններ Կարեն Նազարյանը եւ Տիգրան Հովհաննիսյանը մասնաշենքի կառուցման արձանագրությունը զետեղեցին շենքի հիմքերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ավանդության ոսկեփորիկ մատյանում մշտապես իր ուրույն և մնայուն տեղն է զբաղեցրել ամանորյա հանդիսության գոնակապարությունը: Մնալով ավանդությանը հավատարիմ՝ 2010 թ. դեկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ նշվեց վերոհիշյալ գոնակապարությունը: Համդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ԳՀՃ և ՍՎԴ դասախոսական կազմը, ճեմարանական ուսանողները, ինչպես նաև՝ աշխարհիկ այլ հյուրեր:

Տերունական աղոթքից և ՀՀ Օրհներգից հետո բացման խոսքով հանդես եկավ ԳՀՃ տեսուչ՝ հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սարոյանը: Հայր սուրբը նշեց, որ ներկայի և ապագայի կամրջող հատվածում մարդու միտքը պաշարվում է ուրախությամբ և տխրությամբ, քանզի յուրաքանչյուր տարվան հրաժեշտ տալով, մենք բաժանվում ենք մեր կյանքի մի հատվածից, սակայն նույն պահին ուրախությունը պատում է մեր սրտերը, երբ մտաբերում ենք գալիք բարիքները դիմավորելու հանգամանքը: Այս ամենը ստիպում է, որ մենք կտրվենք ներկայից և մեր անձերը քննենք անցած ճանապարհի կանգառներում՝ փորձելով պարզել ու գնահատել մեր կատարած յուրաքանչյուր քայլը: Վերջում հայր սուրբը շեշտեց, որ տարվա ավարտին մարդուն բնորոշ է հատկապես դժգոհ հոգեվիճակը, որը բորբոքված է նախորդ տարվա չիրականացած իղձերից, սակայն գալիք տարում բացերը լրացնելու գաղափարը մեղմում է այդ անհանգստությունը: Եզրափակող բարեմաղթանքում հայր սուրբը իր աղոթքն ուղղեց Աստծուն, որպեսզի Տերը երկար օրեր պարգևի Վեհափառ Տիրոջը և Նոր տարին միայն բարի ձեռքբերումներով լեցուն լինի:

Այնուհետև, վաստակաշատ Շոթա Վարդանյանի գլխավորությամբ ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարեց Ալ. Հարությունյանի «Կենաց երգ»-ը: Երգի ավարտից հետո միաբանության անունից խոսք ասաց հոգեշնորհ Տ. Երեմիա արեղա Աբգարյանը:

Հանդիսության ծրագրում ներառված էր նաև շնորհալի ճեմարանականների ասմունքը, որտեղ իր տաղանդը ցույց տվեց ԳՀՃ Դ լսարանի սան Նորվան ուրարակիր Իսահանյանը:

Դասախոսների անունից խոսք ասաց հարգարժան Նորայր Պողոսյանը: Նա նշեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի հովանու ներքո, դասախոսական կազմի նվիրված աշխատանքի շնորհիվ ճեմարանը հավատարիմ է մնում իր առաքելությանը, ինչի արդյունքում վաղուց արդեն այն դարձել է այն միջավայրը, որտեղ աննահանջ ուսուցանվում և պահպանվում են ազգային բարձրագույն արժեքները: Պարոն Պողոսյանը նշեց, որ ճեմարանում դասավանդում են իրենց ոլորտի լավագույն մասնագետներ, և սա անմիջականորեն նպաստում է ապագա հոգևորականների գիտելիքների բարձրագույն դիրքերի նվաճմանը: Բանախոսը հիշեցրեց, որ 2011-ը հայ գրչության 500 ամյակի հոբելյանական տարեթիվն է, իսկ դա կրկին վերաբերում է Մայր Աթոռին, քանզի այդ ամենի սկիզբը հենց Էջմիածինն էր: Հավարտ իր ելույթի հարգարժան պարոն Պողոսյանը մեջբերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մեկ տարի առաջ հնչեցրած խոսքը. «Զգտում ենք կառուցել աշխարհ, որ լեցուն լինի մարդասիրությամբ, ազնվությամբ, արդարությամբ, միսիթարությամբ ու երջանկությամբ»:

Ուսանողության անունից խոսք ասաց ԳՀՃ Զ լսարանի սան՝ բարեշնորհ Սևակ սարկավագ Սարիբեկյանը: Սարկավագի խոսքերով տարեմուտը լավագույն ժամանակն է սեփական անձը և գործերը

քննելու համար, որպեսզի պարզ լինի, թե ինչպես ենք կանգնելու մեր խղճի և Աստծո առջև: Բարեշնորհ սարկավագը գոհունակության խոսք հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին այն բանի համար, որ Վեհափառի «փոքր ածուն»՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ունի բոլոր այն պայմանները, որոնց շնորհիվ ուսանողը արթուն մտքով և հարուստ գիտելիքով է ապրում:

Ամփոփելու փաղանդով օժտված մեկ այլ սան՝ Գ լսարանի Գագիկ դպիր Հովհաննիսյանը, ներկաների ուշադրությանը մատուցեց Վ. Թեքեյանի «Հայու հոգին» ստեղծագործությունը:

Ավանդական կաղանդչեքի ժամանակ ուսանողությունը ջափավոր և գեղեցիկ հումորով ներկայացնում էր ճեմարանականի առօրյան և այլ միջադեպեր:

Եպիսկոպոսական խոսք ասելու հրավիրվեց գերաշնորհ Տ. Ոսկան արքեպ. Գալփաքյանը: Սրբազանը նշեց, որ վերջին անգամ Մայր Աթոռում իր մասնակցած Ամանորյա հանդիսությունը կատարվել էր 1964 թվականին: Նա շեշտեց, որ զգացվում է միաբանության մեծ աճ և որ դա չափազանց կարևոր է հայ ժողովրդի կյանքում, քանզի հոգևորականը չափազանց մեծ ներդրում ունի հայապահպանության գործում:

Եզրափակող Օրհնության խոսքն ասաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը նշեց, որ տարեմուտին յուրաքանչյուր անձ վերանայում է նախորդ տարվա դեպքերը, ոմանք ունենում են շատ ուրախություններ ոմանք ոչ, սակայն անհրաժեշտ է եկող տարին դիմավորել ուրախությամբ հատկապես այն բանի համար, որ տարին սկսվում է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Ծննդյամբ: Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքն ուղղեց տեսչական և դասախոսական կազմին, միաբանությանը և նշեց, որ չնայած հաջող ընթացքին նրանց ավելի ծանր աշխատանք է սպասվում եկող տարում: Վեհափառը կոչ արեց բոլորին ի մի բերելու սեփական ուժերը և կարողությունները, որպեսզի հայ ազգը հաղորդ դառնա սեփական հավատի մանրամասնություններին և կարևոր տարրերին, որոնց վրա էլ դարեր շարունակ կանգնած է հայ ժողովուրդը և Հայ Առաքելական Ս. Եկեղեցին: Վեհափառ Հայրապետը մեծ կարևորություն տվեց հիշողությանը, քանզի լուսահոգի անձինք այլևս մեզ հետ չեն, սակայն ֆիզիկական ներկայությունը կարելի է փոխարինել տվյալ անձից բարի հիշողություններով: Վեհափառը հորդորեց նաև տարեմուտի երեկոյին այցելել տկար և վատառողջ մարդկաց, որպեսզի եկող տարվա շեմին նրանք զգան մարդասիրության և բարեկամության ջերմությունը :

ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆ, Ե ԼՍԱՐԱՆ